ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ -17/24» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստ

ք. Երևան 19 դեկտեմբերի 2017թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Պետրոսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության գնահատում:
3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի գնահատում:
4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2.ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության գնահատում

2.1 ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները՝ «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ, «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ, «Սմարթլայն» և «Արվատեկ» ՍՊԸ, հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի գնահատում:

3.1 Ըստ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջների, սահմանված կարգով և ժամկետում «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ, «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ, «Սմարթլայն» և «Արվատեկ» ՍՊԸ մասնակիցները գնահատող հանձնաժողովին են ներկայացրել իրենց կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ համաձայն Հրավերի տեքստի հավելված N 6 և 6.1-ի

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին ճանաչել ընտրված մասնակիցներ, մասնավորապես՝

✓ N 3, 45, 47, 52, 56, 63, 64, 66, 70, 72, 74, 79, 82, 83, 84, 85, 91, 92, և 93 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

✓ N 13, 14, 16, 19, 20, 21, 23, 29 և 46 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Պատրոն ՌՄ» ՍՊԸ -ին ճանաչել ընտրված մասնակից:

✓ N 4, 50 և 69 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

✓ N 89 և 90 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Սմարթլայն» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

✓ N 49 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Արվատեկ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակիցների իրական շահառուների մասին տվյալները:

3. Ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ անգործության ժամկետ է սահմանվում *պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը* հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ 20.12.2017թ.- 24.12.2017թ. ներառյալ:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

4.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ _____ Հ. Արչունց

Գնահատող անդամներ (ԳԱ)՝ _____ Թ. Զաքարյան

_____ Ն. Հարությունյան

Բացող անդամներ (ԲԱ)՝ _____ Ա. Իսկանդարյան

_____ Հ. Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան